Երեքշաբթի
28 հուլիսի 2026թ.
№ 10 (660)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
9 771829 346006 26010 >

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Սյունիքը՝ աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի հատման կիզակետ. անորոշություն TRIPP նախագծի շուրջ

Ներձավոր Արևելքում իրավիճակի սրմանը զուգահեռ նոր զարգացումներ են տեղի ունենում Թրամփի ուղու կամ TRIPP-ի կամ, ինչպես Ադրբեջանն ու Թուրքիան են անվանում, «Զանգեզուրի միջանցք»-ի, իսկ ավելի ճիշտ՝ Սյունիքի շուրջ:

- Նախ, ինչպես հուլիսի 10-ին տեղեկացրել է ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատունը՝ «AECOM-ի թիմն ու ՀՀ կառավարության գործընկերներն ուսումնասիրեցին TRIPP-ի տեղանքը՝ երկաթգծի և այլ ենթակառուցվածքների ձևավորման նպատակով, ինչը կաջակցի տնտեսական աճին, փոխկապակցվածությանը և տարածաշրջանային ինտեգրմանը»:
- Հուլիսի 16-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց Վաշինգտոնում

Շարունակությունը՝ էջ 8

Նոր գիտակրթական ծրագիր՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի նախաձեռնությամբ

Կապանի լեռնահարստացման կոմբինատը Երևանի պետական համալսարանի հետ համատեղ իրականացնում է «GEO MAP-CAMP. քարտեզագրելով Հայաստանի ապագան» գիտակրթական նախագիծը՝ հանքարդյունաբերության ոլորտին, տարածաշրջանում նրա զարգացման բնագավառին առնչվող:

Հուլիսի 24-ին ծրագրի մեկնարկը տեղի ունեցավ «Ոսկե Կապան» հյուրանոցում:

Մասնակցում էին «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանը, կոմբինատի գլխավոր տնօրեն Դավիթ Դանիելյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», «Սերվիս», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» բաժինների ուսանողներ, Սյունիքի մարզի դպրոցականներ:

Ցուցադրվեց տեսահոլովակ՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի անցած ուղին ներկայացնող:

Բացման խոսքով հանդես եկան «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ովքեր ողջունեցին գիտակրթական այդ նախաձեռնությունը: Բանախոսների խոսքում կարևորվեցին գործատու-բուհ համագործակցությունը, կրթության և աշխատանքի միջև ամուր կապերի ստեղծումը:

Սասուն Ավետիսյանը մասնավորապես նշեց, որ ներկայացվող ծրագրով ամուր հարթակ է ստեղծվում երիտասարդների, ապագա մասնագետների և գիտական ոլորտի ներկայացուցիչների համար, ովքեր ապագայում թարմ գաղափարներով ներդրում կունենան հանքարդյունաբերության զարգացման ոլորտում: Նաև հավելեց, որ ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր ոլորտի զարգացումն անհնար է պատկերացնել առանց նորարարության և երիտասարդների ներգրավվածության:

Այնուհետև ցուցադրվեց ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ու Կապանի լեռնահարստացման կոմբինատի համագործակցության վերաբերյալ տեսահոլովակ:

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ու Կապանի լեռնահարստացման կոմբինատի համագործակցությունը,

ըստ տեղի ունեցած միջոցառումների, ներկայացրեց ֆակուլտետի կայուն զարգացման ծրագրերի համակարգող Պապին Մուրադյանը:

Այնուհետև «GEO MAP-CAMP» ծրագիրը ներկայացրին ֆակուլտետի PR պատասխանատու Իրինա Սահակյանը և Պապին Մուրադյանը:

Հուլիսի 27-ին «Ոսկե Կապան» հյուրանոցում ավարտվեց ԵՊՀ աշխարհագրության

Շարունակությունը՝ էջ 8

Սյունիքի հանդեպ Ադրբեջանի ոտնձգության դեպքում Իրանն անտարբեր չի մնա

Հուլիսի 22-23-ին Կապանում տեղի ունեցած Հայաստան-Իրան համաժողովին մասնակցած՝ Իրանի պատվիրակները, համաժողովի աշխատանքների ավարտից հետո, հանդիպում են ունեցել «Սյունյաց երկիր» պարբերականի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ:

Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակության կազմում էին ճանաչված վերլուծաբաններ ու փորձագետներ Ալի Ռեզա Նազիֆը, Էհսան Մովահեդիանը, Մեհտի Սայեֆ Թաբրիզին, Շահիբ Բահմանը, Սեիդ Մեհտի Հյուսեինը:

Հանդիպմանը մասնակցում էր նաև Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին, ով ողջունեց հանդիպման մասնակիցներին, ինչպես և համառոտ տեղեկություններ փոխանցեց Հայաստան-Իրան՝ ավարտված համաժողովի արդյունքների մասին:

Այնուհետև կողմերը զրուցեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի շուրջ:

Սամվել Ալեքսանյանը՝ խմբագրակազմի և պարբերականի հետևորդների անունից, վերստին դատապարտեց Իրանի դեմ ԱՄՆ-ի ու Իսրայելի սանձազերծած ագրեսիան, որը, փաստորեն, նոր փուլ է թևակոխել վերջին օրերին:

Հանդիպման ընթացքում խոսակցություն ծավալվեց հատկապես TRIPP նախագծի շուրջ:

ԻԻՀ ներկայացուցիչները վերահաստատեցին այդ նախագծի հանդեպ իրենց երկրի վերաբերմունքի անփոփոխությունը, որն արտահայտվել էր դեռևս 2025 թ. օգոստոսի 8-ից հետո, երբ Վաշինգտոնում ստորագրվեցին հայտնի փաստաթղթերը: Ասել է թե՝ TRIPP–ը շարունակում է մնալ կարմիր գիծ Իրանի Իսլամական Հանրապետության համար, եթե այն պետք է խոչընդոտի Հայաստան-Իրան բազմադարյա հաղորդակցության ուղիներին ու շփումներին, եթե այն սպառնալիք կստեղծի Իրանի անվտանգության համար:

Սամվել Ալեքսանյանը ներկայացրեց փաստեր՝ վերջին 100 և ավելի տարիներին՝ Մեղրու տարածքով Ադրբեջանի ու Թուրքիայի միջև անխոչընդոտ ճանապարհ բացելու ուղղությամբ վերոնշյալ երկու պետության գործադրած ջանքերի վերաբերյալ, որոնք միշտ էլ մերժվել են հայկական իշխանությունների կողմից:

Ուստի և տեղի ունեցողը, ինչպիսի անվամբ ու փաթեթավորմամբ էլ ներկայացվի, ադրբեջանաթուրքական դարավոր երազանքի իրագործում է նշանակում, ինչպես և ընկալվում է Սյունիքում:

TRIPP նախագծի իրականացմամբ, դատելով հրապարակված փաստաթղթերից, Սյունիքը փաստորեն կվերածվի աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի հատման ասպարեզի՝ դրանից բխող հնարավոր բոլոր հետևանքներով:

Հանդիպման մասնակիցներն անդրադարձան նաև Հարավային Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական մյուս փոփոխություններին և արտահայտեցին գրեթե միասնական տեսակետ՝ առանց Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հնարավոր չի լինի տարածաշրջանում հասնել կայուն և երկարաժամկետ խաղաղության:

Անդրադառնալով տարածաշրջանում եվրոպական կառույցների դերակատարությանը, պարբերականի խմբագիրը մասնավորապես նշեց՝ **«Եվրոպայի վերաբերյալ մեր ավանդական դրական ընկալումները վերջին տարիներին, կարելի է ասել, էական տրանսֆորմացիայի է ենթարկվել: Որևէ բացատրություն չի կարող ունենալ այն անտարբեր պահվածքը, որ որդեգրել են եվրոպական կառույցները՝ Արցախում քրիստոնեական սրբավայրերի դեմ պետական մակարդակով իրականացվող վանդալիզմի կամ մշակութային**

Շարունակությունը՝ էջ 3

Նավակատիք և վերաօծում Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ մայր եկեղեցում



2026 թ. հուլիսի 11-12-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ, տեղի ունեցան Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ մայր եկեղեցու նավակատիքի և վերաօծման հանդիսավոր արարողություններ, որոնք կատարեց Սյունյաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը:

Հուլիսի 11-ին կատարվեց եկեղեցու դռնբացեքի և նավակատիքի արարողությունը:

Հուլիսի 12-ին՝ Պայծառակերպության տոնի օրը, կայացավ եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությունը:

Տոնակատարությանը մասնակցում էին հարյուրավոր գորիսեցիներ և հյուրեր հանրապետության տարբեր վայրերից:

* * *

1897 թվականին Գորիսի Մելիք-Յուսեփինյան իշխանական տոհմի ներկայացուցիչները նախաձեռնում են Գորիս քաղաքում հայկական եկեղեցու կառուցումը՝ Վարարակն գետի աջ ափին: Կառուցման համար կազմակերպվում է հանգանակություն, որին մասնակցել է ողջ քաղաքը:

Ըստ բանավոր վկայությունների՝ եկեղեցու կառուցումը ղեկավարել է իտալահայ ճարտարապետ:

Եկեղեցին 1903 թվականին օծվել է Խրիմյան Հայրիկի կողմից, բացվել է 1904 թվականին, սակայն գմբեթ և խորան չի ունեցել:

1920 թվականին եկեղեցում կատարվել է Գարեգին Նժդեհի և Արուսյակ Մինասյանի պսակադրությունը:

1921 թ. փետրվարի 21-ին Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի է ունեցել նաև Գարեգին Նժդեհի Սպարապետ օծվելու հանդիսավոր արարողությունը:

Հատկանշական է, որ այդ զորավոր սրբավայրի հիմնադրումը նաև նախա պատմություն ունի:

Ըստ ավանդության՝ Բարդուղիմեոս առաքյալը, Պարսկաստանից անցնելով Հայաստան, անցել է այս վայրով, եկեղեցու տեղում մի փոքրիկ վկայարան է կառուցել (նախկինում այդպիսի սովորություն է եղել):

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ժամանակ, այստեղ կառուցվել է մի փոքրիկ մատուռ: Նախկինում եկեղեցիներ կառուցվել են ոչ թե պատահական վայրերում կամ՝ ըստ հարմարավետության, այլ՝ 40 օր ծոմ են պահել, աղոթք են արել, որպեսզի Տեր Աստված ցույց տա, թե որտեղ կառուցեն տվյալ սրբավայրը, այսինքն՝ սրբավայրերը կառուցվել են Տիրոջ հայտնության շնորհիվ:

Պատահական չէ Խրիմյան Հայրիկի՝ Սուրբ Էջմիածնից գալն ու օծելը, Գարեգին Նժդեհի՝ հենց այս եկեղեցում Սպարապետ օծվելը, սա այն պարագայում, երբ Սպարապետը հաճախակի Տաթևի վանքում էր մնում, պատահական չէր Սպարապետի ամուսնությունը հենց այս եկեղեցում:

Եկեղեցին գործել է մինչև 1926 թվականը:

Փակվելուց հետո օգտագործվել է որպես հացամթերման պահեստ, այնուհետև՝ մինչև 1988 թվականը, եղել է երկրագիտական թանգարան:

Վերաբացվել է 1989 թվականի դեկտեմբերին:

1897-1904 թթ. Գորիսում կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում 1995-ին սկսեցին վերանորոգման աշխատանքները:

Սուրեն Խաչատրյանի և Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի ջանքերով եկեղեցին ձեռք բերեց իր վերջնական ու ամբողջական տեսքը:

1997-ի դեկտեմբերի 20-ին՝ ժողովրդական տոնախմբության վերածված օրը, հանդիսավոր պատարագով և օծման արարողությամբ վերաբացվեց Սբ Գրիգոր Լուսավորիչը:

Խաչի օծման արարողությունը կատարեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն:

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանի շնորհավորական ուղերձը Հանքագործի և մետալուրգի օրվա առթիվ

Հարգելի՛ գործընկերներ, հանքարդյունաբերության ոլորտի վաստակաշա՛տ մասնագետներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի՝ Հանքագործի և մետալուրգի օրվա կապակցությամբ:

Մեր ընկերության պատմությունը ստեղծվել է հանքագործների, երկրաբանների, հարստացնողների, ինժեներների, ինչպես նաև օժանդակ աշխատակիցների թիմային աշխատանքի շնորհիվ: Ձեր մասնագիտական հմտությունները, միասնականությունը և աշխատանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը տեսանելի են և գնահատելի:

Բոլորդ նկատել եք, որ Կապանի լեռնահարստացման կոմբինատում բարեփոխումների մի նոր ժամանակաշրջան է մեկնարկել: Լայն թափով իրականացվում են մեծածավալ ներդրումային ծրագրեր, որոնք ուղղված են ընկերության երկարաժամկետ զարգացմանը: Հանքարդյունաբերությունը մեր երկրի տնտեսության կարևորագույն և առաջատար ոլորտներից է:

Ուզում եմ հատուկ ընդգծել լեռնամետալուրգիայի դերը հանքարդյունաբերության մեջ. այն ոլորտի հենասյուներից է, և հենց այստեղ են միավորվում գիտությունը, բարձր տեխնոլոգիաներն ու մասնագիտական փորձը:

Շարունակելու ենք ակտիվորեն շարժվել առաջ ՝ ստեղծելով առավել անվտանգ ու ժամանակակից աշխատանքային միջավայր՝ բարձր գնահատելով յուրաքանչյուրիդ ներդրումը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս՝ մասնագիտական տոնի առթիվ, մաղթում առողջություն, մասնագիտական նորանոր ձեռքբերումներ, ձեզ և ձեր ընտանիքներին՝ բարեկեցություն:

Շնորհավոր Հանքագործի և մետալուրգի օրը:

//

Հավաստագիրը ստանալուց հետո ելույթ ունեցավ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը՝ ընդգծելով, որ քաղաքի համար այս կարգավիճակը ոչ միայն մեծ պատիվ, այլև պատասխանատվություն է:

Կապանը՝ ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք

Սյունիքի մարզկենտրոն Կապանում հուլիսի 23-ին պաշտոնապես մեկնարկեց «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք-2026» ծրագիրը:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցեցին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ԱՊՀ անդամ պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի նախագահ Արթուր Մարտիրոսյանը, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ԱՊՀ անդամ պետությունների և գործընկեր կազմակերպությունների պատվիրակներ, Հայաստանի տարբեր մարզերից ժամանած երիտասարդներ, երիտասարդական կենտրոնների ներկայացուցիչներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշեց, որ Կապանին «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» պատվավոր կոչման շնորհումը ոչ միայն քաղաքի ներուժի ճանաչումն է, այլև Հայաստանի երիտասարդական քաղաքականության և միջազգային համագործակցության նկատմամբ վստահության վկայություն:

Նրա խոսքով՝ խորհրդանշական է, որ 2026 թվականին հենց Սյունիքի մարզն է հյուրընկալում ԱՊՀ երկու կարևոր նախաձեռնություն. Կապանը կրում է «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք», իսկ Մեղրին՝ «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» պատվավոր կոչումները:

Արթուր Մարտիրոսյանը նշեց, որ «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» նախաձեռնությունը կարևոր հարթակ է միջպետական համագործակցության, երիտասարդների ակտիվ ներգրավվածության և փոխադարձ վստահության ամրապնդման համար:

Անդրադառնալով Հայաստանի երիտասարդական քաղաքականությանը՝ նախարարի տեղակալն ընդգծեց. **«Հայաստանը հետևողականորեն իրականացնում է երիտասարդության պետական քաղաքականություն՝ հիմնված մասնակցության, հավասար հնարավորությունների և մարդկային ներուժի զարգացման սկզբունքների վրա»:**

Միջոցառման ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Սյունիքի մարզպետը:

Բացման արարողության կարևորագույն պահերից մեկը «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք-2026» հավաստագրի պաշտոնական հանձնումն էր: ԱՊՀ անդամ երկրների չորս երիտասարդ հանդիսավոր կերպով Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին փոխանցեցին «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» հավաստագիրը:

Հավաստագիրը ստանալուց հետո ելույթ ունեցավ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը՝ ընդգծելով, որ քաղաքի համար այս կարգավիճակը ոչ միայն մեծ պատիվ, այլև պատասխանատվություն է:

«Կապանը պատմամշակութային հարուստ ժառանգություն ունեցող, դինամիկ զարգացող քաղաք է, որի ներկան ու ապագան կերտվում են նաև այստեղ ապրող ու արարող մարդկանց շնորհիվ: Այդ ամենում առանձնահատուկ դեր ունեն մեր երիտասարդները, ովքեր նոր գաղափարների, նախաձեռնությունների և առաջընթացի իրական կրողներն են: Այս կարգավիճակը բացառիկ հնարավորություն է ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների հետ նոր կապեր ստեղծելու, փորձի փոխանակման և երկարաժամկետ համագործակցություն ձևավորելու համար»,– նշեց համայնքապետը:

Գևորգ Փարսյանը նաև շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ Կապանը 2026 թվականի ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք առաջադրելու նախաձեռնության և ցուցաբերած վստահության համար:

Բացման արարողության շրջանակում տեղի ունեցավ նաև «Հայկական ժառանգություն. Կապանը՝ ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» թեմային նվիրված փոստային նամականիշը շրջանառության մեջ դնելու և մարելու արարողությունը:

320 դրամ անվանական արժեքով նամականիշի վրա պատկերված է Կապան քաղաքի համայնապատկերը՝ ֆուտբոլ խաղացող երեխաներով, զբոսնող երիտասարդներով և քաղաքի խորհրդանիշ ձյունածածկ Խուստուփ լեռով: Նամականիշի աջ հատվածում պատկերված է «Կապանը՝ ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» լոգոտիպը, իսկ ներքևի մասում առկա է «ԿԱՊԱՆԸ՝ ԱՊՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» գրառում:

Նամականիշի մարումն իրականացրին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը և Կապանի համայնքապետի առաջին տեղակալ Գոռ Թադևոսյանը:

Պաշտոնական արարողությունն ավարտվեց տոնական համերգով: Կապանի մշակույթի կենտրոնում ելույթ ունեցավ Հայաստանի հանրային ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր և դիրիժոր Երվանդ Երզնկյանի ղեկավարությամբ: Հնչեցին Առնո Բաբաջանյանի, Շառլ Ազնավուրի և այլ հայ կոմպոզիտորների սիրված ստեղծագործությունները՝ հանդիսավոր ավարտ հաղորդելով Կապանի համար պատմական նշանակություն ունեցող օրվան:

ԻԶԱ ԱՍԾԱՏՐՅԱՆ

Սյունիքի հանդեպ Ադրբեջանի ոտնձգության դեպքում Իրանն անտարբեր չի մնա

Սկիզբը՝ էջ 1

ցեղասպանության հանդեպ: Ակնհայտ է նաև Եվրոպայի երկերեսանիությունը Հայաստան–Ադրբեջան հարաբերություններում՝ առավելություն տալով Ադրբեջանի շահերին»:

Տարածաշրջանում հաստատվող խաղաղության վերաբերյալ նույնպես Սյունիքում այլ պատկերացում կա: Քանի դեռ Սյունիքի հազարավոր հեկտար հողատարածքներ օկուպացված են, քանի դեռ Ադրբեջանը շարունակում է տարբեր պահանջներ ներկայացնել ՀՀ–ին, քանի դեռ շինծու մեղադրանքներով հայ գերիները տառապում են Ադրբեջանի զնդաններում, քանի դեռ պղծվում են Արցախի քրիստոնեական սրբավայրերը, քանի դեռ Հայաստանն ադրբեջանցիների պատկերացմամբ Արևմտյան Ադրբեջան է՝ խաղաղություն ասվածն ավելի շատ շարունակական զիջումների կամ շարունակական կապիտուլյացիայի տպավորություն է թողնում:

Մինչդեռ՝ սյունեցիների համար ավելի բաղձալի արժեք, քան իրական խաղաղությունն է՝ չկա ու չի կարող լինել, որը պայմանավորված է և՛ երկրամասի աշխարհագրական դիրքով, և՛ հազարամյակների պատմությամբ:

Նշվեց նաև՝ անհնար է չնկատել տարածաշրջանում ՌԴ դիրքերի թուլացումն Արցախյան 3-րդ պատերազմից հետո, իսկ առաջացող վակուումը, ըստ էության, լրացնում են Ադրբեջանն ու Թուրքիան:

Այդ հանգամանքը, ինչպես և ԱՄՆ–ի կողմից Իրանի դեմ հնարավոր ցամաքային ագրեսիան կարող են տարածաշրջանը կանգնեցնել նոր սպառնալիքների դեմ–հանդիման:

Փորձագետներն այդ առումով ուշագրավ տեսակետ հայտնեցին՝ Սյունիքի հանդեպ Ադրբեջանի ոտնձգության դեպքում Իրանի Իսլամական Հանրապետությունն անտարբեր չի մնա:

Սյունիքի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները որոշակի անդրադարձ են ունենում նաև երկրամասի ժողովրդագրական վիճակի վրա, որը ներկայումս երկրամասին սպառնացող ամենամեծ վտանգն է: Ուստի և շատ կարևոր է մարզի տնտեսության զարգացումը, այդ թվում՝ հայ–իրանական բարեկամության ու համագործակցության շնորհիվ:

Սյունիքում ողջունում են ցանկացած ներդրումային ծրագրի իրականացում, եթե դրանք չեն վնասելու Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

Հանդիպման ընթացքում քանիցս անդրադարձ կատարվեց հայ–իրանական բարեկամությանը, որը դիմացել է դարերի փորձություններին, որին խոչընդոտող որևէ նախագիծ չպետք է տեղ գտնի երկու երկրների մերօրյա հարաբերություններում:

//

Փառատոնին առաջին անգամ մասնակցեց ֆրանսիացի վիրտուոզ ջութակահար Ժիլ Ապապը

Չորրորդ անգամ՝ Կապանը հանրապետության երաժշտական մայրաքաղաք

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Օր առաջին (04.07.2026 թ.)

Մեկ տարի անց Կապանը կրկին հյուրընկալել է անվանի երաժիշտների, երիտասարդ շնորհալի կատարողների և արվեստի սիրահարների: Չորրորդ անգամ՝ հուլիսի 4-ին, մեկնարկեց Կապանի միջազգային երաժշտական փառատոնը: Տասը օր շարունակ Կապանի արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճում կհնչեն համաշխարհային ճանաչում ունեցող կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ անկրկնելի պահեր պարգևելով հանդիսատեսին:

«Կապան ֆեստ»-ն այս անգամ հյուրընկալել է աշխարհի 16 երկիր ներկայացնող մեծանուն երաժիշտների: Նրանց հետ երգեհոնային դահլիճի բեմահարթակում հանդես կգան Երևանից, Հայաստանի տարբեր մարզերից ժամանած 55 երիտասարդ շնորհալի երաժիշտներ ու կապանցի աշակերտներ և ուսանողներ:

Հուլիսի 4-ին տրվեց փառատոնի մեկնարկը: Արվեստի քոլեջի երգեհոնային դահլիճը լեփ-լեցուն էր բարձրակարգ երաժշտության սիրահարներով: Համերգին ներկա էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, պաշտոնատար այլ անձինք, երաժիշտներ, մշակութային գործիչներ, բազմաթիվ հյուրեր:

Համերգը սկսվեց Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ստեղծագործության կատարումով՝ «Դաշնամուրային քառյակ No.2 մի բեմոլ մաժոր» (դաշնամուր՝ Մարիաննա Շիրինյան, ջութակ՝ Հրաչյա Ավանեսյան, ալտ՝ Իբեն Թայլման, թավջութակ՝ Տոմաս Լունդստրյոմ): Առնո Բաբաջանյանի «Պոեմը» հնչեցրեց դաշնակահարուհի Աննա Սարկիսովան:

Ուրսուլա Ֆոն Լերբերը և Քրիստիան Էրբսլոհ-Փափազյանը դաշնամուրով հնչեցրին Աստոր Պիացոլայի «Լիբերտանգո» ստեղծագործությունը:

Դաշնակահար Ժուլիեն Լիբերը կատարեց Մորիս Ռավելի «Պավան» ստեղծագործությունը:

Նույն կոմպոզիտորի մեկ այլ ստեղծագործություն՝ «Սրճարան 1930», «Տանգոյի պատմություն» գործը կատարեցին Կարեն Շահգալոյանը (ջութակ), Էդուարդ Հրմուշյանը (կիթառ): Համերգային ծրագիրն ավարտվեց Մոցարտի «Հայելի» ստեղծագործությամբ (ջութակահարներ՝ Էլլի Սու, Հայկ Կազազյան):

Փառատոնի կարևոր բաղադրիչներից է «Կապան ֆեստ ակադեմիան», որի շրջանակում աշխարհի տարբեր երկրներից ընտրված երիտասարդ երաժիշտները մասնակցում են արդյունավետ վարպետության դասերի, հանդիպում միջազգային հեղինակություն վայելող արվեստագետների հետ և բեմ բարձրանում նրանց կողքին:

Օր երկրորդ (5.07.2026 թ.)

Փառատոնի երկրորդ օրվա՝ հուլիսի 5-ի ծրագիրը խորագիր ուներ՝ «Պատմության հնչյունը», բայց մինչև համերգը սկսվելը փառատոնի գեղարվեստական ղեկավար, թավջութակահար Սևակ Ավանեսյանը մանրամասնեց փառատոնի երկրորդ օրվա ծրագիրը՝ ներկայացնելով նրանում ներառված կոմպոզիտորներին և նրանց անմահ ստեղծագործությունները:

Համերգը սկսվեց Մորիս Ռավելի «Լավանս» ստեղծագործությամբ, որ հանդիսատեսին մատուցեցին Քրիստիան Էրբսլոհ-Փափազյանը և Ուրսուլա վոն Լերբերը (դաշնամուրային կատարում): Հաջորդիվ հնչեց Կլոդ Դեբյուսիի երեք մասանոց «Ջութակի սոնատ սոլ մինոր» ստեղծագործությունը (ջութակահար՝ Հրաչյա Ավանեսյան, դաշնակահար՝ Մարիաննա Շիրինյան):

Հանդիսատեսը հատկապես բուռն արձագանքեց ակորդեոնահար Ռադու Ռատոյի կատարումներին: Երաժիշտը նախ կատարեց Կամիլ Սեն Սանսի «Մահվան պարը» ստեղծագործությունը, այնուհետև հնչեցրեց մոլդովացի ակորդեոնահար, դիրիժոր, կոմպոզիտոր Միհայ Ամիհալաքիոյեի կարճ, վիրտուոզ բնույթի ստեղծագործությունը:

Ընդմիջումից հետո հանդիսատեսին հաճելի պահեր պարգևեց երաժիշտների եռյակը՝ Ժուլիեն Լիբեր (դաշնամուր), Հայկ Կազազյան (ջութակ), Սևակ Ավանեսյան (թավջութակ). նրանք հնչեցրին լայնակտավ մի ստեղծագործություն՝ Ֆելիքս Մենդելսոնի չորս մասանի «Դաշնամուրային տրիո № 2 դո մինոր, օպուս 66» ստեղծագործությունը: Բարձրակարգ մի կատարում, որ բուռն ծափահարություններ և հիացական բացականչություններ կորզեց հանդիսատեսից:

Փառատոնում ևս մի ավանդույթ է ձևավորվել՝ Լոնդոնի «Florian Leonhard Fine Violins» պատմական գործիքների բացառիկ ցուցահանդես, որ կազմակերպվում է երգեհոնային դահլիճին կից սրահում: Այս անգամ ներկայացված էին Գվարներիի, Ստրադիվարիուսի, Պաոլո Տեստոնիի մի քանի դար առաջ պատրաստած գործիքները՝ ջութակ, ալտ, թավջութակ, ընդ որում՝ գործիքներից մեկը թվագրված է 1865 թ.:

Օր երրորդ (6.07.2026 թ.)

Փառատոնի երրորդ օրը՝ հուլիսի 6-ի կեսօրին, սկսվեց համերգով, որին մասնակցում էին երկու սերնդի ներկայացուցիչներ: Բեմահարթակում փառատոնի նշանավոր երաժիշտների հետ հանդես եկան հեղինակավոր բեմերում առաջին քայլերն անող երիտասարդ, շնորհալի երաժիշտներ: Հնչեցին նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործություններ, որոնք գեղագիտական հաճույք պատճառեցին հանդիսականին: Եվ մի բան պարզ դարձավ՝ ականավոր երաժիշտներին արժանի հերթափոխ է աճում:

Երեկոյան՝ մինչ համերգը սկսվելը, արդեն ձևավորված ավանդույթով, նախահամերգային հարցուպատասխան էր: Հանդիսատեսին ներկայացան բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր, մոլդովացի վիրտուոզ ակորդեոնահար Ռադու Ռատոյը և ժամանակակից ամենավառ ջութակահարներից «Պաբլո Սարասատե» միջազգային մրցույթի դափնեկիր Կարեն Շահգալոյանը:

Համերգը բացվեց Յոհան Սեբաստիան Բախի «Չակոննա՝ պարտիտա թիվ 2-ից ռե մինոր» ստեղծագործության կատարումով:

Ինչպես նախորդ օրը, այս անգամ ևս իր նվագով հանդիսատեսին հիացրեց ակորդեոնահար Ռադու Ռատոյը:

Հաջորդիվ հնչեց Յոհան Բրամսի «Սկերցո, օպուս 4» (ալտի և դաշնամուրի համար): Բեմահարթակում էին Լիլիթ Մարտիրոսյանը (դաշնամուր) և Անդրեյ Գրիդչուկը (ալտ):

Եվս մի անգամ վիրտուոզ ակորդեոնահար Ռադուս Ռատոյը բեմ բարձրացավ, այս անգամ ջութակահար Հրաչյա Ավանեսյանի հետ: Հնչեց 20-րդ դարի նշանավոր կոմպոզիտոր Մեչիսլավ Վայնբերգի «Ռապսոդիա մոլդովական թեմաներով» ստեղծագործությունը:

Արդեն ավանդույթ է դարձել, որ ընդմիջումից հետո կատարվում է մի լայնակտավ ստեղծագործություն՝ այս անգամ հնչեց 19-րդ դարի ֆրանսիացի կոմպոզիտոր Էռնեստ Շոսոնի «Ջութակի, դաշնամուրի և լարային քառյակի համար կոնցերտը»: Բեմահարթակում էին մենակատարներ՝ Հայկ Կազազյան (ջութակ,) Ջուլիեն Լիբեր (դաշնամուր), Կարեն Շահգալոյան (առաջին ջութակ), Էլլի Սու (երկրորդ ջութակ), Լոան Կազալ (ալտ), Ֆրանցիսկո Վիլա (թավջութակ):

Համերգի ավարտին հանդիսատեսին անակնկալ էր սպասվում: Բեմում դարձյալ ակորդեոնահար Ռադու Ռատոյն էր, ով մեծ ներշնչանքով հնչեցրեց Արամ Խաչատրյանի հանրահայտ վալսը «Դիմակահանդես» բալետից, որն արժանացավ ներկաների բուռն արձագանքին:

Օր չորրորդ (7.07.2026 թ.)

Փառատոնի՝ հուլիսի 7-ի չորրորդ օրվա ծրագիրը խորագիր ուներ՝ «Փառերգել Փարաջանովին» և իր բնույթով տար-

↗

Բեմահարթակում վիրտուոզ կատարողներ են

Փառատոնի ամենասպասված իրադարձություններից մեկը «Վիեննական երեկոն Կապանում» աննախադեպ միջոցառումն էր

Բերվում էր նախորդ օրերից: Նախահամերգային հարցազրույցի շրջանակում նախ բեմահարթակում ֆրանսահայ կոմպոզիտոր Միշել Պետրոսյանն էր, ում ստեղծագործություններն ընդգրկում են նվագախմբային, օպերային, բալետային, կամերային և կինոյի երաժշտությունը: Նա համադրում է ժամանակակից երաժշտությունը հին տեքստերի հետ: Բանախոսն ընդհանուր գծերով ներկայացրեց բեմադրությունը՝ հայտնելով, որ փառատոնի գեղարվեստական ղեկավար Սևակ Ավանեսյանի ցանկությունն էր, որ առաջնահաղը լինի Կապանում՝ փառատոնի շրջանակում:

«Փառերգել Փարաջանովին»-ը երաժշտական, գրական, տեսողական ստեղծագործություն է՝ ստեղծված վիդեոնկարիչ Մարկ դը Պիեռֆյոյի հետ համագործակցությամբ և ներշնչված փարաջանովյան աշխարհով: Բեմահարթակում «Musicatreise» վոկալ անսամբլի տասներկու երգիչներն էին՝ Մարսելում հայտնի դիրիժոր Ռոլանդ Հայրապետյանի ղեկավարությամբ:

Էկրանին սահում էին փարաջանովյան կոլաժների պատկերներ, կինոռեժիսորի նկարահանած ֆիլմերից դրվագներ, որոնք վերակենդանացնում էին նրա մանկության երազային աշխարհը: Այդ ամենը միահյուսվում էր վոկալ անսամբլի երգեցողության հետ: Հանդիսականը մեկուկես ժամ փարաջանովյան աշխարհում էր և որոշ չափով հաղորդակից եղավ Փարաջանով մարդուն ու նրա դժվար ընկալելի արվեստին:

Օր հինգերորդ (8. 07. 2026 թ.)

Փառատոնի հուլիսի 8-ի համերգային ծրագիրը «Կապանիագեն» խորագիրն էր կրում: Դանիայի մայրաքաղաքի փոքր-ինչ ձևափոխված այս տարբերակը պատահական չէ. քանզի այն բոլոր երաժիշտները, ովքեր պիտի հանդես գան համերգին, որևէ կապ ունեն Դանիայի հետ՝ ալտահարներ Լոան Կազալը, Իբեն Թայլմանը, թավջութակահարներ Թոմաս Լունդստրյոմը, Սևակ Ավանեսյանը Դանիայի թագավորական օպերայի նվագախմբի մենակատարներ են:

Ի դեպ, այդ նվագախումբն աշխարհի հներից է՝ 575 տարեկան: Դանիայի երաժշտական մշակույթի հետ առանձնահատուկ կապ ունի Կարլ Նիլսոնի անվան միջազգային մրցույթի հաղթող, ջութակահար Հրաչյա Ավանեսյանը, ով հանդես է գալիս Դանիայի և մայրաքաղաք Կոպենհագենի ազգային նվագախմբերի հետ:

Սրանով առնչությունը Դանիայի հետ չի սահմանափակվում: Համերգին ներկա էր Հայաստանում և Վրաստանում Դանիայի Թագավորության դեսպան, նորին գերազանցություն Աննե Թոֆթ Սորենսենը, ով բարեմաղթանքի խոսքեր հղեց երաժիշտներին և հանդիսատեսին:

Նախահամերգային հարցուպատասխանի մասնակիցը՝ եվրոպացի ամենաինքնատիպ երաժիշտներից մեկը՝ դաշնակահար Մարիաննա Շիրինյանն էր, ով հանդես է եկել աշխարհի ամենահեղինակավոր փառատոներում, համագործակցել լավագույն երաժիշտների և առաջատար նվագախմբերի հետ: Նա Դանիայի թագավորական երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր է, հրավիրյալ պրոֆեսոր Օսլոյում, և Կապանի միջազգային երաժշտական փառատոնի գեղարվեստական խորհրդատուն է: Մարիաննան ներկայացրեց օրվա համերգային ծրագրի երկացանկը, պատասխանեց այլ հարցերի:

Համերգային ծրագիրը սկսվեց Ֆ. Բրիջի «Ողբ» ստեղծագործության կատարմամբ (ալտահարները՝ Լոալ Կազալ, Իբեն Թայլման):

Այնուհետև իր ողջ երաժշտական տաղանդը ցուցադրեց Մարիաննա Շիրինյանը: Կես ժամից ավելի հանդիսատեսը դաշնամուրային երաժշտության հնչյունների աշխարհում էր: Դաշնակահարը նախ՝ կատարեց Մոցարտի «Սոնատ դո մաժոր» ստեղծագործությունը, ապա՝ Շոպենի «Մազուրկա, օպուս 17», «Բալլադ No 3, օպուս 17» ստեղծագործությունները:

Ընդմիջումից հետո դարձյալ կատարվեց լայնակտավ ստեղծագործություն. Բրամսի «Լարային սեքստետ թիվ 1 սի բեմոլ մաժոր, օպուս»-ը, գործը՝ բաղկացած չորս մասից: Այս անգամ ևս հանդիսատեսները բավականին տպավորված էին, և երաժիշտները տեղի տալով նրանց բուռն արձագանքին, մի քանի անգամ բեմ դուրս եկան և, ի վերջո, որպես բիս՝ ևս մի ստեղծագործություն հնչեցրին:

Օր վեցերորդ (9. 07. 2026 թ.)

Փառատոնը բնականոն հուն է մտել և շարունակում է գեղագիտական հաճույք պատճառել հանդիսատեսին: Փառատոնի հուլիսի 9-ի օրն անցավ ջազի հնչյունների ներքո: Նախ՝ ցերեկային համերգն ամբողջովին նվիրված էր «Kapan Fest» փառատոնի ջազային ֆակուլտետի նվագախմբի ելույթին (գեղարվեստական ղեկավար՝ ջազմեն, շեփորահար Տիգրան Սուչյան): Իսկ երեկոյան Կապանի արվեստի քոլեջի երգեհոնային դահլիճում «Բեկա Գոչիաշվիլի և ընկերներ» ջազային անսամբլն էր:

Հանդիսատեսը միշտ ծաղիկներով ու ջերմ ծափողջույններով է վարձատրել երաժիշտ-կատարողներին

Բեկա Գոչիաշվիլին վրացի ջազ դաշնակահար է, ծնվել է 1996 թ. Թբիլիսիում: Երիտասարդ տարիքից ցուցաբերելով բացառիկ տաղանդ՝ յուրացրել է ինչպես դասական, այնպես էլ ջազային երաժշտություն և արդեն պատանեկան տարիքում ելույթ է ունեցել միջազգային բեմերում: 2010 թվականից բնակվում է Նյու Յորքում, որտեղ շարունակում է միջազգային ստեղծագործական գործունեությունը:

Բեմահարթակում ջազն էր՝ տաք ու կրքոտ ռիթմերով, իմպրովիզացիաների ազատություն ապահովող հնարավորություններով, ինչն անկրկնելի մթնոլորտ էր ստեղծել դահլիճում: Երկու ժամ շարունակ հանդիսատեսը ջազի անիմանալի հնչյունների աշխարհում էր և հերթական անգամ անկրկնելի տրամադրությամբ թողեց դահլիճը:

Օր յոթերորդ (10. 07. 2026 թ.)

Փառատոնի յոթերորդ օրվա ծրագիրը «Քարտ բլանշ» խորագիրն էր կրում:

Այն սկսվեց անակնկալով. ծրագրից դուրս հանդես եկավ ֆրանսիացի ջութակահար Ժիլ Ապապը, ով հանպաստրաստից մի մեղեդի հնչեցրեց:

Օրվա համերգային ծրագիրն ընդգրկում էր ուշ ռոմանտիզմից դեպի քսաներորդ դարի նոր երաժշտության ժամանակաշրջանը: Առաջինը բեմահարթակում էին Մարիաննա Շիրինյանը (դաշնամուր) և Անդրեյ Գրիդչուկը (ալտ), ովքեր կատարեցին չեխ մեծ կոմպոզիտոր Լեոշ Յանաչեկի «Հեքիաթ» ստեղծագործությունը: Դա մի գողտրիկ երաժշտություն էր, որտեղ իրականությունը և երևակայությունը միահյուսվում են՝ ստեղծելով ռոմանտիկ մթնոլորտ:

Հաջորդիվ կատարվեց Յոհան Բրամսի «Կլարնետի տրիո լա մինոր, օպուս 114» ստեղծագործությունը: Չորս մասից բաղկացած այդ գործը հնչեցրին Մարիաննա Շիրինյանը (դաշնամուր), Անդրեյ Գրիդչուկը (ալտ), Միքայել Հախնազարյանը (ջութակ):

Համերգի երկրորդ բաժինը նվիրված էր 20-րդ դարի ամենաազդեցիկ կոմպոզիտորներից մեկին՝ Դմիտրի Շոստակովիչին:

Նախ հնչեց նրա «Դաշնամուրային կվինտետ սոլ մինոր, օպուս 57» ստեղծագործությունը, որ կոմպոզիտորի ամենանշանավոր կամերային գործերից մեկն է: Բեմահարթակում էին Աննա Սարկիսովան (դաշնամուր), Հայկ Կազազյանը (ջութակ), Կարեն Շահգալդյանը (ջութակ), Անդրեյ Գրիդչուկը (ալտ), Միքայել Հախնազարյանը (թավջութակ):

Համերգի ավարտին հնչեց Շոստակովիչի «Օկտետը», որը վերջինս ստեղծել է ընդամենը տասնվեց տարեկանում: Հինգ մասանի

Շարունակությունը՝ էջ 6

Փառատոնի վերջին օրը դիրիժորական վահանակի մոտ էր Վիեննայում բնակվող դիրիժոր Ֆլորիան Կրիսպերը

Մասնագիտական տոնը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում

Քաջարանում կամ ինչպես հնում էին ասում՝ լեռնագործների քաղաքում հուլիսի 17-ին նշվեց հանքագործի և մետալուրգի օրը:

Տոնը սկսվեց քաղաքի մշակույթի պալատի բակից, որտեղ հյուրասիրություն էր նախատեսված:

Օրը նշանավորվեց նաև նրանով, որ կազմակերպվել էր կոմբինատի լրատվության և հանրության հետ կապերի բաժնի օպերատոր, լուսանկարիչ և վավերագրող Նվեր Զելյայի անհատական ցուցահանդեսը: Երեք տասնամյակ Նվերի լուսանկարչական ապարատի և տեսախցիկի օբյեկտիվները վերակենդանացրել են դեմքեր ու իրադարձություններ, Սյունիքի բնությունը, լեռնաշխարհը:

Պալատի ճեմասրահում հավուր պատշաճի խոսքեր հնչեցին ցուցահանդեսի բացման առիթով: Նվեր Զելյային հանձնվեց կոմբինատի գլխավոր տնօրենի շնորհակալագիրը՝ ընկերության արժեքները տարածելու և հանրահռչակելու համար:

Ի դեպ, պալատի ճեմասրահում Կապանի երկրագիտական թանգարանը տարածաշրջանի հանքարդյունաբերությանն առնչվող ցուցադրանք էր կազմակերպել, ինչից ակներև էր, որ մետաղների հանույթը մեր երկրում հազարամյակների պատմություն ունի:

Տոնական օրվա պաշտոնական մասը պալատի դահլիճում էր:

Օրհնանքի խոսք հնչեցրեց Քաջարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին՝ շնորհավորելով ներկաներին և արժևորելով տարբեր սերնդի լեռնագործների վաստակը, բարձր գնահատեց նրանց դերը ձեռնարկության կայացման գործում: Բանախոսը նաև հայտնեց, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արդյունահանվել է 12 միլիոն տոննա հանքաքար, ինչը կոմբինատի պատմության մեջ ռեկորդային է՝ վեց ամսվա կտրվածքով: Նա նաև ներկայացրեց վերջին 1,5 տարում ընկերության տեխնիկական վերազինման ոլորտի ձեռքբերումները՝ մասնավորապես ժամանակակից մեքենաների և սարքավորումների հայթայթման առումով:

Այդ նպատակով հատկացվել է 50 միլիարդ դրամ:

Ավելի քան յոթ միլիարդ դրամ ուղղվել է սոցիալական ծրագրերին և համայնքային աջակցությանը:

Դե, իսկ հարկային մուտքերի առումով ընկերությունը շարունակում է մնալ Հայաստանի առաջատարը:

Սակայն կոմբինատի նշանակությունը չի չափվում միայն արտադրության ծավալներով: Կարևոր քայլեր են իրականացվում նաև կորպորատիվ կառավարման ու կայուն զարգացման ոլորտներում: Այս համատեքստում ընկերության գլխավոր տնօրենը մասնավորապես նշեց. **«ՀՊՄԿ-ն Հայաստանում միակ ընկերությունն է, որը միացել է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրին: Երկու տարվա ընթացքում ընկերության ESG վարկանիշի ցուցանիշը բարելավվել է 20 կետով և գերազանցել միջազգային հանքարդյունաբերության միջին ցուցանիշը: Ես հատկապես հպարտ եմ, որ, հակառակ տարածված կարծրատիպերի, հենց հանքարդյունաբերական ոլորտում է գրանցվում բիզնեսի առաջատար չափանիշների ներդրման նման հաջողություններ»:**

Քաջարան խոշորացված համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանն իր խոսքում ընդգծեց՝ Քաջարանն այն քաղաքն է, որ կյանք է առել հատկապես հանքագործի քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Այս համատեքստում նա մասնագիտական տոնի առթիվ ջերմ բարեմաղթանքներ հղեց «ՀՊՄԿ» ՓԲ ընկերությանը՝ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի գլխավորությամբ:

Այնուհետև տեղի ունեցավ պարգևատրման հանդիսավոր արարողություն: Ընկերության 18 աշխատակից արդյունավետ գործունեության և մասնագիտական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար արժանացան ընկերության գլխավոր տնօրենի շնորհակալագրերին և պատվոգրերին:

Արդեն երկու տարի է՝ տոնական օրերին զուգահեռ Երևանի պետհամալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը Քաջարանում անցկացնում է «Պատանի երկրաբանի ճամբար» միջոցառումը: Դրան մասնակցում են Սյունիքի տարբեր համայնքների բարձր դասարանցիներ, ովքեր բարձրագույն կրթություն ստանալու համար դիմել են այդ ֆակուլտետը: Ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանը պատմեց վերջին տարիներին երկրաբանի մասնագիտության հանդեպ աճող հետաքրքրության մասին՝ ասելիքը մեծադիր էկրանին ներկայացնելով թվերի լեզվով: Բանախոսը կարևորեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և ոլորտի ընկերությունների սերտ համագործակցությունը ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հետ:

Հանքագործի և մետալուրգի օրվան նվիրված հանդիսավոր տոնակատարությունը եզրափակվեց համերգային ծրագրով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Չորրորդ անգամ՝ Կապանը հանրապետության երաժշտական մայրաքաղաք

Սկիզբը՝ էջ 5

այդ ստեղծագործությունը կատարեցին Կարեն Շահգալդյանը, Հրաչյա Ավանեսյանը, Էլլի Սուն, Արման Սիմոնյանը, Անդրեյ Գրիդչուկը, Իբեն Թալմանը, Ֆրանցիսկո Վիլլան, Աստղիկ Սիրանոսյանը:

Համերգային յոթերորդ օրը հանդիսատեսին հնարավորություն ընձեռեց և՛ մեկ անգամ զգալ կամերային երաժշտության անկրկնելի ուժն ու գեղեցկությունը:

Օր ութերորդ (11. 07. 2026 թ.)

Հուլիսի 11-ի համերգային ծրագիրը «Առանց կապող լարերի» խորագիրն էր կրում: Սկզբում հանդես եկավ երաժիշտների քառյակը՝ Աննա Սարկիսովա (դաշնամուր) և թավջութակահարներ Նարեկ Հեքեքյան, Ալեքսանդր Շիրինյան-Ռոդե, Աստղիկ Սիրանոսյան, ովքեր կատարեցին չեխ կոմպոզիտոր Դավիթ Պոպպերի «Ռեքվիեմ» ստեղծագործությունը: Այնուհետև հնչեցին գերմանական դասական երաժշտության ռոմանտիզմի ժամանակաշրջանի գլուխգործոցներ:

Կատարվեց Ֆրանց Շուբերտի քնարական և խորապես մարդկային «Դաշնամուրային տրիո No.1 սի բեմոլ մաժոր, օպուս 99» գործը: Դաշնամուր՝ Մարիաննա Շիրինյան, թավջութակ՝ Աստղիկ Սիրանոսյան, ջութակ՝ Անդրեյ Բարանով: Ի դեպ, սա Անդրեյ Բարանովի առաջին բեմելն էր փառատոնում և հանդիսատեսին հիացրեց արտահայտիչ կատարմամբ և բարձր տեխնիկական վարպետությամբ:

Ընդմիջումից հետո հնչեց Ֆելիքս Մենդելսոնի «Օկտետը», որ կոմպոզիտորը գրել է բավականին երիտասարդ տարիքում և մինչև այժմ համարվում է կամերային երաժշտության ամենափայլուն ստեղծագործություններից:

Դահլիճը բուռն ծափողջույններով դիմավորեց այդ ստեղծագործությունը կատարողներին՝ Հրաչյա Ավանեսյան, Էլլի Սու, Ժիլ Ապապ, Անդրեյ Բարանով, Պոլ Լուան, Լոան Կազալ, Ֆրանցիսկո Վիլլա, Սևակ Ավանեսյան:

Երբ նվագն ավարտվեց, դահլիճը թնդաց ծափերից և բացականչություններից: Եվ որպես բիս՝ երաժիշտները կատարեցին և՛ մի սրտամոտ ստեղծագործություն:

Օր իններորդ (12. 07. 2026 թ.)

Փառատոնի հուլիսի 12-ի ծրագիրը հագեցած էր և բազմազան՝ երաժշտական ստեղծագործությունների առումով: Երաժիշտ-կատարողները տարբեր սերնդի ներկայացուցիչներ էին, ուստի միահյուսվել էին փորձն ու երիտասարդական ներշնչանքը: Փառատոնի կազմակերպիչներն անընդհատ փոփոխում են նախօրոք հայտարարված երկացանկը՝ անակնկալներ մատուցելով հանդիսատեսին:

Փառատոնի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար, թավջութակահար Սևակ Ավանեսյան, ջութակահարներ Հրաչյա Ավանեսյան Անդրեյ Բարանով

Համերգային ծրագիրը բացվեց Յոհան Սվենդսենի «Օկտետ լյա մաժոր, մաս 1-ին» ստեղծագործության կատարմամբ: Բեմահարթակում երաժիշտների ութնյակն էր՝ Սելմա Թայլման (առաջին ջութակ), Հելդեր Սոարես (երկրորդ ջութակ), Օվսաննա Հարությունյան (երրորդ ջութակ), Հաննա Շիրինյան-Ռոդե (չորրորդ ջութակ), Իբեն Թայլման (առաջին ալտ), Հայկ Շահբազյան (երկրորդ ալտ), Ալեքսանդր Շիրինյան-Ռոդե (առաջին թավջութակ), Դենիս Պուստովգար (երկրորդ թավջութակ):

Այնուհետև Անդրեյ Բարանովը (ջութակ), Աննա Սարկիսովան (դաշնամուր) հնչեցրին Ֆրից Կրայսլերի «Լիբեսլայդ» ստեղծագործությունը:

Հաջորդիվ հնչեց Լուիջի Բոկերինիի «Ֆանդանգո» գործը: Բեմահարթակում էին Էդուարդ Հրմուշյանը (կիթառ), Կարեն Շահ-

Հանքագործի և մետալուրգի օրն Ագարակում

Հուլիսի 18-ին Ագարակ քաղաքում տեղի ունեցան Հանքագործի և մետալուրգի օրվան նվիրված տոնական միջոցառումներ:

Տոնակատարության նախաձեռնողն ու կազմակերպիչն Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատն է, որը տարածաշրջանի խոշորագույն ձեռնարկություններից և գործատուներից է:

Տոնական միջոցառումները մեկնարկեցին կոմբինատի վարչական շենքում, որտեղ բացվեց ընկերության աշխատակիցներին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսը: Ցուցադրությունը ներկայացնում էր այն մարդկանց, որոնց ամենօրյա նվիրումն ու աշխատանքը կարևոր ներդրում են հանքարդյունաբերության և մետալուրգիայի զարգացման գործում:

Տոնակատարության գլխավոր իրադարձությունը տեղի ունեցավ Ագարակի կենտրոնական հրապարակում, որտեղ անցկացվեց պարգևատրման հանդիսավոր արարողություն: Պատվոգրերի և շնորհակալագրերի արժանացան Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի լավագույն աշխատակիցներն ու աշխատանքի վետերանները՝ բարձր մասնագիտական պատրաստվածության, բարեխիղճ աշխատանքի և երկարամյա ծառայության համար:

Ոլորտի աշխատողներին շնորհավորելու էին եկել համայնքի ղեկավարությունը, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ, ինչպես նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ու Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարությունը: Իրենց ելույթներում նրանք բարձր գնահատեցին հանքագործների և մետալուրգների դերը երկրի և տարածաշրջանի տնտեսական զարգացման գործում՝ շնորհակալություն հայտնելով նրանց՝ նվիրված և պատասխանատու աշխատանքի համար:

Տոնական միջոցառումները եզրափակվեցին մեծ համերգային ծրագրով՝ հայկական շոու-բիզնեսի հայտնի երգիչների և երաժշտական խմբերի մասնակցությամբ:

Երեկոյի գեղեցիկ ավարտը դարձավ տոնական հրավառությունը, որը լուսավորեց Ագարակի երկինքը և անմոռանալի տոնական տրամադրություն պարգևեց քաղաքի բնակիչներին ու հյուրերին:

Տոնը դարձավ հարգանքի և երախտագիտության գնահատական այն մարդկանց նկատմամբ, որոնց ամենօրյա աշխատանքը կարևոր հիմք է հանդիսանում արդյունաբերության զարգացման ու տարածաշրջանի բարեկեցության համար:

* * *

Այսօր կոմբինատում աշխատում է շուրջ 1100 աշխատակից: Նրանց մասնագիտական կարողությունները, պատասխանատվությունն ու նվիրումն ապահովում են ձեռնարկության կայուն գործունեությունն ու հետագա զարգացումը:

Միջոցառման շրջանակում ընկերության ավելի քան 50 աշխատակից արժանացել է պարգևների և շնորհակալագրերի՝ երկարամյա բարեխիղճ աշխատանքի, բարձր պրոֆեսիոնալիզմի և ձեռնարկության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

Կոմբինատի գլխավոր տնօրեն Ալեքսանդր շնորհավորել է կոլեկտիվին՝ մասնագիտական տոնի առթիվ, շնորհակալություն հայտնել աշխատակիցներին՝ պատասխանատու աշխատանքի համար ու մաղթել նոր հաջողություններ, անվտանգ աշխատանք և բոլոր նպատակների իրականացում:

Հանդիսավոր միջոցառմանը մասնակցել է նաև «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, Ագարակի կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Ռոման Խուդոլիյը: Նա պարգևատրել է կոմբինատի վետերաններին, ընդգծել նրանց ներդրումը ձեռնարկության զարգացման գործում և շնորհակալություն հայտնել ողջ կոլեկտիվին՝ մասնագիտությանը հավատարիմ մնալու համար՝ մաղթելով արդյունավետ աշխատանք և նախատեսված ծրագրերի հաջող իրականացում:

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը Մեղրիի տարածաշրջանի քաղաքաստեղծ ձեռնարկությունն է և կարևոր դեր է կատարում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Տարիներ շարունակ ձեռնարկությունը սերտ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ աջակցելով տարածաշրջանի զարգացմանն ուղղված ծրագրերին և նախաձեռնություններին: Մասնագիտական տոնի առթիվ կոմբինատի աշխատակիցներին շնորհավորել է նաև Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը: Նա ընդգծել է ձեռնարկության նշանակությունը տարածաշրջանի համար, բարձր գնահատել կոմբինատի աշխատակիցների ներդրումը և մի շարք աշխատակիցների պարգևատրել համայնքապետարանի պարգևներով:

Միջոցառման ընթացքում Ռոման Խուդոլին պարգևատրվել է Արգիշտի Ա-ի անվան հուշարձաթե մեդալով, իսկ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենը՝ Ալեքսանդր Բելյաևը՝ Սպենդիարյանի անվան բրոնզե մեդալով:

Համայնքի ղեկավարը շնորհակալություն է հայտնել ձեռնարկության ղեկավարությանը՝ երկարամյա համագործակցության, սոցիալական ծրագրերին ցուցաբերած աջակցության և Մեղրիի տարածաշրջանի զարգացման գործում ունեցած կարևոր ներդրման համար:

Տոնական միջոցառումը դարձավ լեռնահանքային և մետալուրգիական ոլորտի աշխատակիցների աշխատանքի, մասնագիտական նվիրումի և տարածաշրջանի արդյունաբերության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի արժանի գնահատականը:

Թավջութակահար Սևակ Ավանեսյանը ներկայացնում է փառատոնին առաջին անգամ մասնակցող ջութակահար Ժիլ Ապապին

գալոյանը (առաջին ջութակ), Սելմա Թայլմանը (երկրորդ ջութակ), Փոլ Թալլոքը (ալտ), Նարեկ Հեքեքյանը (թավջութակ): Փառատոնի համերգների երկացանկում հաստատուն տեղ ունի գերմանացի կոմպոզիտոր Յոհան Բրամսը: Այս անգամ հնչեց հանրաճանաչ կոմպոզիտորի «Դաշնամուրային կվինտետ» ստեղծագործության առաջին մասը՝ Մարիաննա Շիրինյանի, Էլլի Սուի, Հրաչյա Ավանեսյանի, Պոլ Թալլոքի, Ֆրանցիսկո Վիլայի կատարմամբ:

Ընդմիջումից հետո հանդիսատեսին երաժշտական հրավառություն էր սպասվում: Նախ հնչեց Դմիտրի Շոստակովիչի «Լարային կվարտետ թիվ 8» հինգ մասանոց ստեղծագործությունը: Կոմպոզիտորի՝ քառյակի համար գրված այս գործը հնչեցրին՝ Անդրեյ Բարանով (առաջին ջութակ), Հրաչյա Ավանեսյան (երկրորդ ջութակ), Լուան Կազալ (ալտ), Սևակ Ավանեսյան (թավջութակ):

Ծրագրի ավարտը հետաքրքրական էր. հնչեց 20-րդ դարի սկզբի ռումինացի կոմպոզիտոր Ջորջ Էնեսկուի «Ջութակի սոնատ թիվ 3, օպուս 25» ստեղծագործությունը, որ նրա ամենահայտնի գործերից է: Այն հնչեցրին երկու վիրտուոզ երաժիշտ-կատարողներ՝ Մարիաննա Շիրինյանը և ֆրանսիացի ջութակահար Ժիլ Ապապը: Ինքնատիպ մի արվեստագետ, որ համադրում է դասական երաժշտությունը ֆոլկի, ջազի և համաշխարհային երաժշտության ավանդույթների հետ:

Օր տասներորդ (13. 07. 2026 թ.)

Փառատոնի նախավերջին օրվա՝ հուլիսի 13-ի ծրագիրը ևս խորագիր ուներ՝ «Աշխարհով մեկ Ժիլի հետ»: Դա մի տոն էր, որ հանդիսատեսին պարգևեց կոլորիտային անձնավորություն և վիրտուոզ ջութակահար Ժիլ Ապապը:

Երաժիշտը ծնվել է Ալժիրում, ուսանել Ֆրանսիայում, հաստատվել Կալիֆորնիայում՝ ընտրելով անկախ ստեղծագործական ուղի: Երաժշտական կրթության մեջ ակտիվ է, շեշտը դնում է իմպրովիզացիայի և ազատ մեկնաբանության վրա:

Օրվա համերգը շեղվեց ավանդականից. բեմից ոչ մի ծանուցում՝ ելույթ ունեցող երաժշտի կամ խմբի և նրանց կողմից կատարվող ստեղծագործության մասին: Բեմահարթակում հայտնվեց Ժիլ Ապապը՝ ի դեպ ոտաբոբիկ, և սկսեց անմիջականորեն շփվել հանդիսատեսի հետ, նախ նվագեց կիթառահար Էդուարդ Հրմուշյանի, հետո ժողովրդական նվագարանների վարպետ Նորայր Քարտաշյանի և ջազմեն, շեփորահար Տիգրան Սուչյանի հետ:

Այնուհետև բեմահարթակում փառատոնի ճանաչված երաժիշտ-կատարողների մի բույլ էր՝ Անդրեյ Բարանով, Հրաչյա Ավանեսյան, Կարեն Շահգալոյան, Էլլի Սու, Լոան Կազալ, Սևակ Ավանեսյան, Ֆրանչեսկո Վիլա, Նարեկ Հեքեքյան և էլի ուրիշներ:

Քիչ հետո նրանց միացան փառատոնի երիտասարդ տաղանդները, և բեմում երաժշտական մի կատարյալ հրավառություն էր, իսկ դահլիճում փառատոնի մյուս երաժիշտները պարային հմտություններ էին ցուցադրում:

Մի խոսքով՝ անկրկնելի-անկրկնելի մի երեկո, որ դեռ երկար կհիշվի:

Օր տասնմեկերորդ (14. 07. 2026 թ.)

Փառատոնի վերջին ակորդը հնչեց հուլիսի 14-ին՝ «Վիեննական երեկո Կապանում» տոնական հանդիսությամբ:

Արվեստի քոլեջի երգեհոնային դահլիճի նստարանները հեռացվել էին՝ դահլիճը վերածելով պարահրապարակի:

Աննկարագրելի մթնոլորտ էր... Ներկաներից շատերը սմոքինգով էին, տոնական երեկոյի մասնակիցները դիմակներ էին ստանում:

Բեմահարթակում՝ դիրիժորական վահանակի մոտ, Վիեննայում բնակվող դիրիժոր Ֆլորիան Կրիսպերն էր, նվագախումբը հնչեցնում էր վալս: Գերմանիայում բնակվող պարուսույց Դավիթ Վարդանյանի հրահանգով սկսվեց վալսը, որը տոնական ելևէջներով ու նրբագեղ պարով լցրեց դահլիճը: Տոնական երեկոյին իրենց մասնակցությունն էին բերել Երևանի պարարվեստի ուսումնարանի սաներն ու շրջանավարտները, ովքեր ներկայացրին այդ նրբագեղ պարը: Վալսերի ավարտից հետո պարուսույցը վարպետության դաս անցկացրեց տոնական հանդիսության մասնակիցների համար:

Այնուհետև բեմահարթակում «Կապան Ֆեստ-2026»-ի ջազ նվագախումբն էր՝ Տիգրան Սուչյանի ղեկավարությամբ: Ջազի տաք ու կրակոտ ռիթմերը վարակեցին երիտասարդներին, և պարահրապարակը մեկեն աշխուժացավ նրանց պարերից:

Ամենավերջում, ազգային մեղեդիներ հնչեցնելով, դահլիճ մտավ հայկական ժողովրդական երաժշտության կատարող ու հետազոտող Նորայր Քարտաշյանի «Տորք» նվագախումբը, և շուրջպարի մեջ մտան ահել ու ջահել:

Տոնական երեկոն ձգվեց մինչև կեսգիշեր...

Այնուհետև փառատոնի գեղարվեստական ղեկավար, թավջութակահար Սևակ Ավանեսյանը երախտագիտություն հայտնեց փառատոնի աջակիցներին և հովանավորներին՝ համոզմունք հայտնելով, որ մեկ տարի հետո՝ փառատոնի ավանդական մեկնարկի օրը՝ հուլիսի 4-ին, կրկին կհանդիպեն:

Սյունիքը՝ աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի հատման կիզակետ. անորոշություն TRIPP նախագծի շուրջ

Սկիզբը՝ էջ 1

2026 թ. հունիսի 1-ին և 2026 թ. հունիսի 4-ին Երևանում ստորագրված՝ ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև ««Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (TRIPP-ի) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Գործադիրի օրենսդրական նախաձեռնությանը:

Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով կառավարությունը դիմել է Սահմանադրական դատարան:

Խնդրո առարկա հարցի քննարկման ժամանակ ՀՀ ԱԳՆ նախարար Արարատ Միրզոյանը նշել է. **«Սահմանադրական դատարանի կողմից նշած միջազգային պայմանագրում ՀՀ-ի սահմանադրությանը չհակասող դրույթներ արձանագրելու որոշման պարագայում սահմանված կարգով կդիմենք ԱԺ, քննարկումը կտեղափոխենք այնտեղ: Համաձայնագրի կնքմամբ արձանագրվում է, որ ՀՀ-ն ու ԱՄՆ-ն նպատակ ունեն հարավային Կովկասում տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման, տարածաշրջանային առևտրի զարգացման ճանապարհով նպաստել ու ամրապնդել հարավային Կովկասում հաստատված խաղաղությունը:**

TRIPP զարգացման ընկերությունը կստանա հողօգտագործման, կառուցապատման իրավունք այս գոտիներում և այս իրավունքը կգործի նախնական 49 տարով: Բաժնեմասերը կբաշխվեն հետևյալ կերպ՝ ԱՄՆ-ին կպատկանի 74%-ը, ՀՀ-ին՝ 26%-ը: Այս նախնական ժամկետի՝ 49 տարին լրանալուց հետո հնարավորություն կա կողմերի համաձայնությամբ երկարացնել համաձայնությունն ու ժամկետը ևս 50 տարով, ու այս դեպքում կապահովվի, որ ՀՀ-ն ունենա ընկերության բաժնեմասերի 49%-ը:

Այս համաձայնագիրը ոչ միայն համահունչ է հանրահռչակված սկզբունքներին և ամրագրված սկզբունքներին, այլև շրջանակային համաձայնագրում բազմիցս հղում է արվում և օգոստոսի 8-ի, և հունվարի 13-ի փաստաթղթերին: TRIPP-ի հիմնադրման փաստաթղթային գործընթացն ավարտելու համար առջևում դեռևս ունենք ևս 2 փաստաթուղթ, դա բաժնետերերի միջև պայմանագիրը կլինի, և կլինի արդեն TRIPP զարգացման ընկերության կանոնադրությունը, այժմ աշխատում ենք այդ փաստաթղթերի վրա»:

- Հայտնի է դարձել նաև, որ Սյունիքով անցնելիք TRIPP+ առևտրային նախագծի ղեկավար կնշանակվի ԱՄՆ քաղաքացի Կոնստանտին Սոկոլովը:

TRIPP+ առևտրային հիմնադրամը կառավարելու է 201 մլն դոլարանոց բյուջե, և լիազորված է տրամադրել վարկեր, դրամաշնորհներ, ներդրումներ անել Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում ու Կենտրոնական Ասիայում:

- Այդ բոլորով հանդերձ, տարածաշրջանում խոշոր խաղացողները կամ աշխարհաքաղաքական կենտրոնները ոչ միանշանակ են ընկալում TRIPP-ի նախագծի իրականացման ընթացքը:

Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինի կարծիքով՝ «TRIPP-ի նախագիծը միայն կշահի, **եթե դրանում Ռուսաստանը մասնակցություն ունենա»:**

Մ. Գալուզինը թերահավատորեն է մոտեցել TRIPP-ի նախագծի կյանքի կոչմանը՝ հղում կատարելով իրանական ու չինական գործընկերներին:

Նա նշել է՝ չի կարծում, որ ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի դեմ վերջին ռազմական գործողություններից հետո իրանական կողմը կուրախանա Միացյալ Նահանգների ներկայությամբ՝ իր սահմանից անմիջապես հյուսիս:

«Որոշ փորձագետներ կարծում են՝ քիչ հավանական է, որ չինական կողմը նույնպես գոհ կլինի Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա, Չինաստանի և Կենտրոնական Ասիայի միջև և այնուհետև դեպի Եվրոպա տրանսպորտային-լոգիստիկ երթուղու մի կտորի՝ «Թրամփի ուղի» երթուղու վրա ամերիկյան վերահսկողությունից: Այսպիսով, հեռանկարները երկիմաստ են, և մենք կարծում ենք, որ Ռուսաստանի մասնակցությունից այս նախագիծը միայն կշահի: Ենթադրաբար այդ նախագիծը պետք է կառուցվի ռուսական երկաթուղու նույն լայնությամբ՝ Ադրբեջանի հետ անխափան կապ ապահովելու համար: Հայկական երկաթուղիները կառավարվում են «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ի կողմից, որը «Ռուսական երկաթուղիներ»-ի դուստր ձեռնարկություն է: Հայաստանի տարածքով տարանցումը, ի դեպ, Եվրասիական տնտեսական միության մասով, պետք է իրականացվի Եվրասիական տնտեսական միության նորմերին և կանոնակարգերին համապատասխան, որից Հայաստանը, ինչպես հայտարարում է, չի ցանկանում դուրս գալ:

Վերջապես, «Թրամփի ուղի»-ն կանցնի ռուս սահմանապահների կողմից պահպանվող տարածքով, որոնք տասնամյակներ շարունակ իրենց հայ գործընկերների հետ միասին պահպանում են Հայաստանի սահմանները Թուրքիայի և Իրանի հետ:

Այսպիսով, այս կամ այն կերպ, Ռուսաստանի կարծիքը պետք է հաշվի առնվի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության կարծիքը»,– նշել է Միխայիլ Գալուզինը:

- TRIPP-ի թեման շարունակում է մնալ միջազգային մամուլում քննարկվող հարցերից մեկը:

Հրապարակումներից մեկում կարդում ենք՝ «ԱՄՆ-ի և Իսրայելի հարձակումների առջև իր անսպասելի դիմադրողականությունից ոգեշնչված՝ Իրանն ավելի մեծ վստահություն է ցուցաբերում, մասնավորապես Հայաստանի նկատմամբ, որի հետ այն կիսում է 44 կիլոմետրանոց (27 մղոն) սահման:

Փոքրի գոտին կարևոր է Իրանի Սև ծով մուտք գործելու համար և Իսլամական Հանրապետությանը լծակներ է տալիս իր մյուս հյուսիսային հարևանի ու Իսրայելի մտերիմ դաշնակցի՝ Ադրբեջանի նկատմամբ:

Իրանի հետ հարաբերություններում ամենահրատապ հարցերից մեկն Իրանի համար «Թրամփի երթուղին» կամ TRIPP-ն է: Թեհրանը վախենում է, որ միջանցքի իրական նպատակն է ֆիզիկապես կտրել այն Հայաստանից և Վրաստանից ու ԱՄՆ անվտանգության կապալառուներին, որոնք նախատեսված են երթուղին պաշտպանելու համար, տրամադրել որոշակի մեկնարկային հարթակ՝ հետագա հակամարտության դեպքում:

Զարմանալի չէ, որ ՀՀ-ում Իրանի դեսպանը մամուլի ասուլիսի ժամանակ բարձրացրեց TRIPP-ի թեման: Հիշելով Իրանի վրա ԱՄՆ-ի հարվածները՝ դեսպանն ասաց. **«Իրանի շատ օրինական և տրամաբանական մտահոգությունն իր սահմանների մոտ ամերիկացիների ներկայության վերաբերյալ պետք է հստակ պատասխան ստանա»:**

- Այդ ամենի հետ մեկտեղ՝ Ադրբեջանը չի թաքցնում այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք»-ի վերաբերյալ իր նկրտումներն ու պատկերացումները:

Նախագահ Ալիևն է ասում՝ **««ԱՄՆ-ում հասկացան, որ «Զանգեզուրի միջանցքը» կարևոր նախագիծ է, քանի որ այն կկապի Ադրբեջանը նրա Նախիջևանի էքսկլավի հետ: Նրանք շատ արդյունավետ աշխատեցին՝ կարողանալով բացատրել Հայաստանին, որ Հայաստանն ինքը ունի խաղաղության կարիքը: Իհարկե, Սպիտակ տանը պատմական հանդիպման ժամանակ նախագահ Թրամփը, Հայաստանի վարչապետի և ինձ հետ միասին, ստորագրեցինք համատեղ հայտարարություն: Միևնույն ժամանակ, երկու երկրների արտաքին գործերի նախարարները նախաստորագրեցին խաղաղության համաձայնագիրը»:**

//

Նոր գիտակրթական ծրագիր՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի նախաձեռնությամբ

Սկիզբը՝ էջ 1

և երկրաբանության ֆակուլտետի ու Կապանի լեռնահարստացման կոմբինատի համագործակցությամբ իրականացվող «GEO MAP-CAMP. քարտեզագրելով Սյունիքի ապագան» գիտակրթական ծրագիրը:

Մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր: Իսկ մինչ այդ նրանք անցկացրեցին երեք հագեցած օր:

Երկրորդ օրը սկսվեց բանախոսությամբ՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատը՝ Սյունյաց լեռնաշխարհի հենարան» թեմայով: Ընկերության բնապահպանության բաժնի պետ Աիդա Ալեքսանյանն իր խոսքում մանրամասնեց ընկերության սոցիալական պատասխանատվության և կայուն զարգացման թեմաները: Այնուհետև նախագծի մասնակիցները հանդես եկան թիմային աշխատանքով:

Առավել հագեցած էր ծրագրի երրորդ օրը, որը սկսվեց Կապանի երկրագիտական թանգարան այցելությամբ:

Այնուհետև ծրագրի մասնակիցները եղան Կապանի լեռնահարստացման կոմբինատում: Վարչական մասնաշենքում անհրաժեշտ հրահանգավորում ստանալուց հետո հաջորդ հանգրվանն ընկերության շահագործման-հետախուզման արտադրամասն էր, որտեղ ընկերության գլխավոր երկրաբան Տիգրան Հովհաննիսյանը հանգամանորեն ներկայացրեց տեղեկություններ հանքամարմինների-հետախուզման մասին:

Օրվա երկրորդ հատվածում ծրագրի մասնակիցները եղան Վահանավանքի վանական համալիրում:

Մայրաքաղաք մեկնելուց առաջ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանը «Սյունյաց երկրի» հետ զրույցում կարևորեց դպրոց-բուհ-գործատու եռամիասնության համագործակցությունը՝ մանավանդ երկրաբան պատրաստելու համատեքստում:

Նա նշեց հանգամանքը, որ ֆակուլտետի «Երկրաբանություն» բաժնում երկու-երեք տարի առաջ ընդհանրապես ընդունելություն չկար: Առաջիկա ուսումնական տարվա համար սահմանված 15 տեղի համար հավակնում է 20-ից ավելի դիմորդ:

«Հաջորդ խնդիրն այն է, որ մասնագիտական դաշտը լրացնելուց հետո ուսանողներին ներգրավենք գիտական գործունեության մեջ, մանավանդ որ այդ նպատակի համար ՀՀ կրթության և գիտության կոմիտեն բավականին լուրջ դրամաշնորհային ծրագրեր է նախատեսում»– նշեց մեր զրուցակիցը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԿՈՐԵԼ Է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2008 թ. շրջանավարտ Համեստ Լորիկի Ծատրյանի բակալավրի՝ «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ, դիպլոմը՝ AB N054980, գրանցման N 612: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Կապանի պետական բժշկական քոլեջի 2009 թվականի շրջանավարտ (քույրական գործ մասնագիտությամբ) Անահիտ Ռուբենի Մանուչարյանի դիպլոմը՝ AK N 080291, գրանցման համար՝ N 4493: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 28.07.2026թ.: